ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ **ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ « ԳԼԽԱՎՈՐ-ԿՈՂՄՆԱԿԻ-ԹԱՔՆՎԱԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԵԹՈԴԻ ՄԻՋՈՑՈՎ**

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝ **ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՍՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ**

ՈՒՍՈՒՑԻՉ՝ **ԱՆԱՀԻՏ ԲԱԴՈՅԱՆ**

ԴՊՐՈՑ՝ **«ՎԱՐԴԵՆԻԿԻ Ռ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ N1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»ՊՈԱԿ**

2022Թ.

ՄԱՐՏՈՒՆԻ

Ամփոփում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն……..3

2.Գրական ակնարկ……..4

3.Փորձարարական հետազոտություն……6

3.1.Խմբի նկարագիրը……6

3.2.Փորձարարական դասեր……7

3.2.1.Փորձարարական դաս-1……...7

3.3.2.Փորձարարական դաս-2……10

4.Վերլուծություն……13

5.Գրականության ցանկ……14

6.Հավելվածներ …… ……15

1.Դասապլան-1……15

2.Դասապլան-2……18

Վասիլի Բարոյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Կրթված միտքը ավելի շատ
հարցեր ունի քան պատասխաններ»
Հելեն Քելլեր

Առաջատար երկրների փորձը վկայում է բարձր գրագիտությամբ կրթված մասնագետի անհրաժեշտության մասին, որը կարող է գլուխ հանել ցանկացած իրավիճակից և ստեղծագործ մտածել: Հետևաբար, կրթական գործընթացում ուշադրություն է դարձվում ստեղծագործական մտածելակերպ ունեցող անհատների պատրաստմանը: Հետազոտությունը, որը նայում է ստեղծագործությանը անհատական տեսանկյունից, կենտրոնանում է սովորողի անհատականության, ստեղծագործական ունակությունների, կյանքի հմտությունների և մոտիվացիայի վրա: Երեխայի ստեղծագործական անհատականությունը սկսվում է մանկությունից և աստիճանաբար զարգանում է մեծանալուն զուգընթաց: Նա ենթարկվում է կյանքի տարբեր հանգամանքների ազդեցությանը և ձևավորում է իր « *ես* »-ը: Սա նպաստում է նրա ստեղծագործական մտածողության զարգացմանը: Երեխայի ինտեգրումը ակտիվանում է նրա ստեղծագործականությամբ, որն էլ խթանում է նրա ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Հաղորդակցությունը երեխայի ակտիվության առաջին նշանն է: Երեխան զարգացնում է իր ամենակարևոր կողմերը տարբեր հարաբերությունների միջոցով: Երբ երեխան մեծանում է, նրա ճանաչողական գործունեությունը խորանում է: Նա սկսում է փնտրել հետևյալ հարցերի պատասխանները. «Ի՞նչ է սա: Ո՞վ է սա, Ի՞նչ է դա կոչվում»: Դպրոցում կրթությունը թույլ է տալիս ձևավորել և զարգացնել երեխայի ճանաչողական գործունեությունը: Երեխան որպես մարդ կարող է ստեղծագործորեն ձեռք բերել սոցիալական փորձ և ազատորեն մտնել սոցիալական հարաբերությունների համակարգ: Մարդը կարող է իրեն դրսևորել սոցիալական միջավայրում իր գործողությունների և հարաբերությունների արդյունքների միջոցով:

Մարդու ստեղծագործական մտածողության զարգացմանը նպաստում են նրա անձին բնորոշ գծերը: Աշակերտակենտրոն ուսուցման մեջ այս խնդիրը առաջնային նշանակություն ունի: Ուսուցիչը, տիրապետելով լեզվական հաղորդակցությանը, աշակերտի ստեղծագործական մտածողության զարգացման մեջ առաջին հերթին ուշադրություն է դարձնում նրա անձնային հատկանիշներին, գիտելիքների խորությանը, բուռն ու արագ մտածողությանը, գաղափարների ներկայացմանը: Աշակերտակենտրոն ուսուցման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում աշակերտի՝ կյանքում իր տեղը փնտրելուն՝ բարելավելով նրա

մտածողությունը և գործողությունները, ինչպիսիք են խոսքը և բանականությունը: Դրա համար ուսուցիչը պետք է առաջին հերթին որոշի դասի նպատակը: Յուրաքանչյուր դասի համար կոնկրետ նպատակ դնելով և վերջնական արդյունքի հասնելու ուղիները հստակ սահմանելով՝ աշակերտը կկարողանա նաև որոշակի արդյունքի հասնել: Երբ ուսուցիչը ժամանակին նկատում է յուրաքանչյուր աշակերտի կարողությունները և կատարելագործում դրանք՝ ստեղծելով տարբեր իրավիճակներ, արդյունքն անմիջապես տեսանելի է: Ինչպես գիտենք, աշակերտակենտրոն ուսուցման հիմնական նպատակը աշակերտին ակտիվացնելն է: Գեղարվեստական ստեղծագործությունները նպաստում են աշակերտի ստեղծագործական մտածողության զարգացմանը: Ստեղծագործական միտք ունենալը չի նշանակում միշտ ներգրավվել կենտրոնացված ստեղծագործական կամ գեղարվեստական առաջադրանքի մեջ: Ստեղծագործող մարդիկ երևակայական են, հետաքրքրասեր և շատ ժամանակ են անցկացնում հանգստի մեջ՝ հանգիստ մտածելով իրենց հետաքրքրող թեմաների մասին և թույլ տալով, որ իրենց միտքը թափառի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Այս ուսումնասիրությունը նպատակ ունի ուսումնասիրել խոսքի և ստեղծագործական մտածողության կառուցվածքային հարաբերությունները և դրանց ազդեցությունը աշակերտի ակադեմիական առաջադիմության վրա: Ստեղծագործական մտածողության բարձր հմտություններ ունեցող աշակերտները լավ արդյունքներ են ցույց տալիս գիտելիքների յուրացման գործում: Ուստի որոշեցի դասավանդման ընթացքում սովորողների կարողությունները ստուգել՝ ստեղծագործական առաջադրանքներ տալով: Հետազոտության նպատակն էր հետևել սովորողների խոսքի հմտությունների զարգացմանը՝ օգտագործելով ստեղծագործական մտածողության զարգացմանն ուղղված մեթոդներ: Սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանն ուղղված առաջադրանքները չեն պահանջում սովորական մեխանիկական գործողություն, որն աշակերտները կատարում են ինքնաբերաբար: Այն պահանջում է գործողություն, որն իրականացվում է ստեղծագործական բարձր մակարդակով, և գործունեություն, որն առաջանում է ստեղծագործական մտածողության արդյունքում: Այն թույլ է տալիս աշակերտին ստեղծագործական մտածողության միջոցով ակտիվորեն մասնակցել լեզվական հաղորդակցությանը: Ստեղծագործական առաջադրանքները թույլ են տալիս

աշակերտներին ստեղծագործ մտածել, և զարգացնել իրենց մտքերը բանավոր և գրավոր խոսքում ազատ արտահայտելու կարողությունը:

Բլումի տաքսոնոմիան ներառում է ստեղծարարությունը որպես ճանաչողության ամենաբարձր մակարդակ՝ սահմանելով այն որպես «տարրերի միավորում՝ համահունչ կամ ֆունկցիոնալ ամբողջություն ձևավորելու համար. տարրերի վերակազմավորում նոր օրինաչափության կամ կառուցվածքի մեջ՝ գեներացնելու, պլանավորելու կամ արտադրելու միջոցով»: Այս հետազոտությունը ներառում է այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են դիտարկումը, հարցադրումը, դիսկուրսի վերլուծությունը և վերլուծական շարադրությունը:

Հետազոտական աշխատանքս իրականացնելու համար ընտրեցի **«Գլխավոր-կողմնակի- թաքնված պատմություններ»** մեթոդը. (**https://youtu.be/0jlaVug53Ko**)մտածողության գործընթացը ակնկալում է հեռանկար, բարդություն, կապեր, վերլուծություններ և հարցեր: Այս մեթոդը հնարավորություն է տալիս վերլուծելու իրադարձությունները և ավելի խորը ուսումնասիրելու պատմությունները, ինչի արդյունքում աշակերտը պետք է ցուցադրի խորաթափանցություն, բացահայտի լրացուցիչ տեսակետներ,կատարի հարցադրումներ:

Մեթոդի նպատակն է.

Բացահայտելու՝

- **Ո՞րն է հիմնական կամ կենտրոնական պատմությունը:**
- **Ի՞նչ է տեղի ունենում պատմության կողքին:**
- **Ո՞րն է թաքնված պատմությունը, այսինքն՝ այն պատմությունը, որը կարող է տատանվել, անտեսվել կամ տեղի ունենալ մակերեսի տակ, որի մասին մենք սկզբում տեղյակ չենք:**

Աշակերտները ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրելով նյութը կհասկանան, որ թաքնված պատմությունները հիմնավոր են և վեր են հանվում ապացույցներից:

3.Փորձարարական հետազոտություն

«Հետազոտել նշանակում է տեսնել այն ամենը, ինչ բոլորն են տեսել,
և մտածել այն, ինչը ոչ ոքի մտքով չի անցել»:
Ալբերտ Սենթ-Գեորգի

3.1.Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի Ռ. Հովհաննիսյանի անվան №1 հիմնական դպրոցի 8-րդ դասարանում:

Այս դասարանում սովորում են 25 աշակերտներ՝ 14 աղջիկ և 11 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիմություն և հմտություններ: Գրականություն անցնում են շաբաթական 3 ժամով և դասացուցակում այն տեղադրված է 5-րդ կամ 6-րդ ժամերին: Այս դասարանի աշակերտների մի մասը միշտ պատրաստված է գալիս դասի , մոտիվացված է, իսկ մյուս մասը դասին միայն ֆիզիկապես է ներկա, ինչը պատճառ դարձավ, որ ես իմ հետազոտական աշխատանքում կիրառեմ **«Գլխավոր-կողմնակի- թաքնված պատմություններ» մեթոդը:** Այս մեթոդը կկիրառեմ ամբողջ դասարանի համար, բայց հետազոտությունը կվերաբերվի միջին կարողությունների տեր 8 աշակերտների, վերոնշված մեթոդի օգնությամբ կզարգացնեմ նրանց ստեղծագործական ունակությունները:

Անցկացրել եմ 2 հետազոտական դասեր:

Վասիլի Բարոյան

3.2.Փորձարարական դաս-1

Ուսումնասիրվող նյութը Մուրացանի «Հասարակաց որդեգիրը» պատմվածքն էր: Աշակերտները տանը ծանոթացել են թեմային: **(Հավելված, Դասապլան -1 /Էջ՝ 15)**

Դասը սկսեցի «Պրիզմա» մեթոդի կիրառմամբ: Աշակերտները հասարակություն բառով կազմեցին պրիզմա, պատասխանեցին՝ Հասարակության ի՞նչ շերտեր գիտեք: Ի՞նչ է նշանակում որդեգիր հարցերին:

Այնուհետև դասարանը բաժանեցի խմբերի՝ խմբում ընդգրկելով տարբեր կարողություններ ունեցող երեխաների: Ստեղծվեց հինգը խումբ: Խնդրեցի, որ ևս մեկ անգամ խմբով կարդան իրենց հանձնարարված հատվածը՝ ուշադրություն դարձնելով յուրաքանչյուր արտահայտությանը, մտքին:

Խմբերի ուսումնասիրած հատվածները.

1-ին—Սովորական օրերից մեկը Գուստավի արհեստանոցում
2-րդ—Գևորգի զգացմունքը Շառլոտայի հանդեպ
3-րդ——Սոմարյանցի տան խնջույքը
4-րդ——Գևորգի վստահությունը հասարակությանը
5-րդ———Հուսալքված պատանին

Ավարտից հետո թիմերը ներկայացրեցին իրենց աշխատանքները՝ իրենց ընթերցած հատվածի բովանդակությունը ներկայացնելով 5-ը նախադասություններով. ընթերցած հատվածը ինչի՞ մասին է, դրան զուգահեռ ի՞նչ է տեղի ունենում և ո՞րն է թաքնված պատմությունը, հեղինակն ի՞նչ է ցանկացել ասել այդ տողերով: Ունկնդիր յուրաքանչյուր թիմ իրավունք ուներ ներկայացնող թիմին տալու 1 հարց՝ տվյալ հատվածի մանրամասները բացահայտելու համար:

Ապա հարցադրումների միջոցով խորամուխ եղան պատմության մանրամասների մեջ. Ի՞նչ տեղի կունենար, եթե.... Ո՞րն է ստեղծագործության կարևոր միտքը, որը ակնառու չէ, բայց հանդիսանում է ստեղծագործության հիմնական առանցքը: Ի՞նչն է այստեղ գլխավորը, որին ուշադրություն չդարձրեցիք սկզբից: Մեթոդի արդյունավետ կիրառումը և աշակերտի ակտիվ, ստեղծագործ մտածողությունը խթանելու համար կազմեցինք m-աձև աղուսակ, որտեղ գրառեցինք մտքերը: Բուռն քննարկման արդյունքում ունեցանք հետևյալ պատկերը:

Գլխավոր- ո՞րն է կենտրոնական պատմությունը	**Կողմնակի-** ի՞նչ է տեղի ունենում այս պատմության կողքին	**Թաքնված-**ո՞րն է թաքնված պատմությունը
1-ին թիմ • Գևորգը օժտված երիտասարդ էր, սակայն աջակից չունենալով աշխատում էր արհեստանոցում: **2-րդ թիմ** • Գևորգը սիրահարված էր վարպետ Գուստավի դստերը՝ Շառլոտային: Այդ սերը անպատասխան էր: **3-րդ թիմ** • Հասարակության ապահովված խավը իր հանգիստը վայելում է ճոխ գինարբուքներ կազմակերպելով: **4-րդ թիմ** • Ըստ Գևորգի՝ ունևոր խավը վստահելի է, նրա խոսքը կշիռ ունի և կասկած տակ առնելը «մեղք» է: **5-րդ թիմ** • Գլխավոր հերոսի ստեղծած «ոսկե դղյակը» փլվեց: Նա չկարողացավ այդ հարվածից հետո ուշքի գալ, ճիշտ որոշումներ կայացնել և շարունակել կյանքը: Այս պահվածքով ավելի վատացրեց մոր կյանքը:	**1-ին թիմ** • Գուստավի դուստրը աջակցում էր հորը՝ արհեստանոցի գործերը կարգավորելու հարցում: **2-րդ թիմ** • Շառլոտան, ինչպես նաև Գուստավը, գնահատում էր լավ, նվիրված աշխատանքը և փոխադարձ վերաբերմունք էր ցույց տալիս, գնահատում էր աշխատասիրությունը: **3-րդ թիմ** • Հարուստները խնջույքների ժամանակ խոսում են մշակութային անցուդարձից ի ցույց դնելով իրենց նվիրվածությունը արվեստին, սակայն իրականությունը այլ է: **4-րդ թիմ** Գլխավոր հերոսը շրջահայց չէր և որոշումներ կայացնելիս շտապում էր: **5-րդ թիմ** Մայրը սկսեց նորից իրենց ընտանիքի հոգսը հոգալ:	**1-ին թիմ** • Շառլոտան, լինելով արհեստանոցի տիրոջ դուստրը, չէր մեծամտացել և աշխատողներին վերաբերվում էր ընկերաբար: **2-րդ թիմ** • Որևէ մեկի նկատմամբ լավ վերաբերմունքը չպետք է վերագրել լուրջ զգացմունքների: **3-րդ թիմ** • Նյութապես ապահովված մասան իրավունք է վերապահում իրեն տնօրինելու ուրիշների ճակտագիրը: **4-րդ թիմ** Անհրաժեշտ է՝ քեզ հետ կատարվածին դիտել կողքինի աչքերով, որպեսզի ճիշտ որոշումներ կայացնես: **5-րդ թիմ** Պայքարել… սա է կյանքում տեղ զբաղեցնելու միակ ուղին: Չհուսահատվել և չնկճվել, դժվարությունների և անհաջողությունների հանդիպելիս խելամիտ որոշումներ կայացնել և առաջ շարժվել:

Ստանիսլավ Բարդաս

Գնահատում- Աշակերտները գնահատվեցին ոչ ֆորմալ դիտարկումների հիման վրա: Թաքնված պատմությունը իր էությամբ սպեկուլյատիվ է, քանի որ ստիպում է աշակերտին մտածել այն մասին, ինչը չի երևում: Ուշադրություն դարձրեցի՝ կարողանում են աշակերտները ճկուն մտածել հնարավոր թաքնված պատմությունների և ազդեցությունների մասին:

Գնահատմանը օգնեցին նաև հետևյալ հարցեր, որոնք դարձան քննարկման, ստեղծագործելու թեմա.

- ✓ Ներկայացրեք՝ ինչո՞ւ է ձեր ներկայացրած պատմությունը թաքնված:
- ✓ Հիմնական պատմության հետ կապելով բացատրեք այդ թաքնված դրդապատճառների ազդեցությունը հերոսի գործողությունների վրա:

Տնային աշխատանք՝ Գրել շարադրություն 15 նախադասությունների սահմանում «Իմ գործողությունները կախված են/ կախված չեն հասարակության կարծիքից» վերնագրով:

Անդրադարձ- կատարեցինք «Քառաբաժան» մեթոդով՝ ունենալով հետևյալ հարցերը.

Ի՞նչ եղավ:	Ի՞նչ էի մ տածում:
Ի՞նչ կուզեի, որ լիներ:	Ի՞նչն էր սխալ:

Վահան Բարդղամյան

3.3.Փորձարարական դաս-2

«Գլխավոր-կողմնակի-թաքնված պատմություն» մեթոդը կիառեցի 5 դասաժամ անց՝ Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքը ուսումնասիրելիս: **(Հավելված, Դասապլան -2 /էջ՝ 18)**

Դասը սկսեցի «Մտագրոհ»- ով:



Բառերով կազմեցին նախադասություն և արեցին հետևություն, որ դասի նյութում կիանդիպեն նման բառերի:

Դարձյալ աշակերտներին, ըստ տարբեր կարողությունների, բաժանեցի խմբերի, նյութը բաժանեցի մասերի և տվեցի ուսումնասիրելու: Աշակերտները կատարեցին նույն աշխատանքները, ինչ Մուրացանի «Հասարակաց որդեգիրը» պատմվածքը ուսումնասիրելիս: Միայն թե այս անգամ խնդրեցի աշակերտներին՝ փոխելու այն կարևոր «ճակատագրական» պահերը, որոնց գոյությունը պատմվածքը տարել է Շիրվանզադեի ներկայացրած ուղիով:

1-ին—Շիրվանզադեի նոր հարևանները:

2-րդ—Լևոնի և մոր հարաբերությունները

3-րդ——Լևոնի պայքարը Իտալիա գնալու համար

4-րդ——Հիասթափություն

5-րդ———Հերոսի վախճանը:

Գլխավոր- ո՞րն է կենտրոնական պատմությունը	**Կողմնակի-** ի՞նչ է տեղի ունենում այս պատմության կողքին	**Թաքնված-** ո՞րն է թաքնված պատմությունը
1-ին թիմ • Շիրվանզադեին աքսորել էին: 2-րդ թիմ • Ալմաստը՝ Լևոնի մայրը, չէր ուզում, որ որդին հոր ճանապարհով գնա: 3-րդ թիմ • Գաղտնի գումար էր հավաքում՝ Իտալիա մեկնելու համար: 4-րդ թիմ • Լևոնի՝ 6-7 ամսվա աշխատանքի վարձը գողացել էին: 5-րդ թիմ • Իմանալով Լուիզայի և Կավալլարոյի ամուսնության մասին՝ իր ապրելը անիմաստ համարեց:	1-ին թիմ • Հեղինակը անընդհատ փոխում էր բնակարանը՝ ավելի էժան բակարան գտնելու նպատակով: 2-րդ թիմ • Լևոնը սիրում էր մորը, չէր ցանկանում նրան վշտացնել, բայց առանց թատրոնի չէր կարող: 3-րդ թիմ Լևոնը նավաստիների համար ելույթ ունենալով հմտացավ իր գործում և նոր գործեր սովորեց նվագել: 4-րդ թիմ Հերոսը գումարը հավաքել էր Իտալիա գնալու, Լուիզային հանդիպելու համր: 5-րդ թիմ Լևոնը երբևէ իր զգացմունքների մասին չէր ասել Լուիզային և միայնակ էր իր մտքերի, զգացմունքների հետ:	1-ին թիմ • Լինելով արվեստագետ՝ փորձում էր գտնել իրեն համապատասխան միջավայր: 2-րդ թիմ • Լևոնի սերը թատրոնի հանդեպ ժառանգական էր, իզուր չէր, որ նրան արտիստ էին ասում: • 3-րդ թիմ Թատրոնի հանդեպ սերը ստիպեց Լևոնին սիրահարվելու արվեստը սիրող և արվեստին հետևող Լուիզային: 4-րդ թիմ Արվեստի հանդեպ սերը ստիպեց Լևոնին գնալ սիրած աղջկա՝ Լուիզայի հետևից Իտալիա, մշակույթի կենտրոն: 5-րդ թիմ Լևոնը թուլակամ էր, պայքարելու, բարձունքի հասնելու փոխարեն ընտրեց մահը:

Իրենց թեմայի շուրջ խմբային աշխատանքի արդյունքում ստացանք հետևյալ պատկերը.

Պատմածքի ընթացքի փոփոխություն

- ✓ Եթե Շիրվանզադեին չաքսորեին Օդեսա, այս պատմության մասին չէինք իմանա:
- ✓ Եթե չորրորդ անգամ չփոխեր բնակարանը, չէր հանդիպի պատմվածքի հերոսներին:
- ✓ Եթե վարձակալները այդքան անմիջական և մտերմիկ չլինեին, չէինք իմանա Լևոնի մասին (յուրաքանչյուրը կապրեր իր կյանքով):
- ✓ Եթե Լևոնի հայրը զգոն լիներ, իր սիրահարվածության մասին չբարձրաձայներ,կամ չծեծեր ռեժիսորին, կամ չհարբեր, տղան անհայր չէր մեծանա և գուցե ուրիշ ճակատագիր կունենար:
- ✓ Եթե հոր այդօրինակ կյանքը չլիներ, Լևոնի մայրը դեմ չէր լինի տղայի՝ արվեստի աշխարհում ապրելուն և գուցե աջակցեր:
- ✓ Եթե մայրը դեմ չլիներ, Լևոնը հավաքած գումարը մոր մոտ կպահեր:
- ✓ Եթե Լևոնը գումար ունենար, լավ կրթություն կստանար և կգրավեր Լուիզայի սիրտը:
- ✓ Եթե Լևոնը կամքի ուժ ունենար, կաշխատեր, կրթություն կստանար, կդառնար ճանաչված մարդ:

Աշխատանքները կատարելու ընթացքում աշակերտները հետաքրքիր լուծումներ էին տալիս գործողությունների ընթացքին և կարողանում էին հիմնավորել:

Գնահատում-Փոխադարձ գնահատում(որ խումբն է հետաքրքիր ընթացք տվել պատմվածքին):

Տնային աշխատանք-Գրել նամակ տրված բովանդակությամ

•նամակ Լևոնին (աշակերտի անունից)

•նամակ Լուիզային (աշակերտի անունից)

.սիրած կնոջ նամակը Լևոնին

•նամակ.սիրո խոստովանություն

Անդրադարձը կատարում եմ ելքի քարտերով.

- Ի՞նչ նոր բան այսօր իմացաք:
- Ո՞ր տեղեկությունն էր ավելի հետաքրքիր:
- Ի՞նչն էր դժվար:
- Ի՞նչը խանգարեց աշխատանքին և ինչու՞:

4. Վերլուծություն

Մեթոդի արդյունավետությունը ստուգելու համար անցկացվեց 2 դաս: Առաջին դասին բացատրեցի աշակերտներին ակնկալիքներս: Իմ ուշադրության կենտրոնում եմ պահել հիմնականում միջին և ցածր առաջադիմություն ունեցող 8-ը աշակերտներին, որն էլ պատճառ հանդիսացավ նրանց ներգրավվածությանը դասապրոցեսին, ինչպես նաև նրանց հնարավորություն տրվեց ձեռք բերել ինքնուրույն աշխատելու հմտություն(ցածր կարողության տեր աշակերտներին նաև աշխատանք բառարանի հետ): Աշակերտները խոստովանեցին, որ բանավոր տրամադրված հետադարձ կապը ավելի արդյունավետ է:

Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները, եկա այն եզրակացության, որ ստեղծագործական ունակություններ բարձրացումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1.տարաբնույթ տարբերակված վարժությունների կատարում ցածր և միջին առաջադիմություն ունեցող աշակերտների համար

2.հարցադրումների և բանավեճի մեթոդների կիրառում դասաժամերին

3.գրավոր և բանավոր հետադարձ կապի տրամադրում

Իմ կարծիքով ես հասա վերջնարդյունքներին: Աշակերտները՝ չնայած սկզբնական պասիվության, կարողացան ստեղծագործական մոտեցում ցուցաբերել դասապրոցեսին, արդյունավետ բանավիճել միմյանց հետ՝ հարգելով և լսելով դիմացինի տեսակետը: Բոլորն,առանց բացառության,մասնակցեցին դասերին: Ազատ կարծիք հայտնելով աշակերտները ակամայից ստեղծագործական մոտեցում էին ցուցաբերում:

Ստեղծագործական

5.Գրականության ցանկ

https://sportedu.am/wp-content/uploads

https://artrucharity.ru/hy/formy-organizacii-obucheniya-istoriya-razvitiya-osnovnyh-form.html

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ, Գրականություն: 8-րդ դասարան, Երևան, Տիգրան Մեծ հրատարակչություն, 2012

https://hy.warbletoncouncil.org/pensamiento-creativo-5948

https://www.postposmo.com/hy/pensamiento-creativo/

https://www.verywellmind.com/characteristics-of-creative-people-2795488

Ասահիսն Բաղրյան

Հավելված

Դասապլան -1

Առարկա՝	գրականություն	Ամսաթիվ	6/12/2022	Կիսամյակ	1-ին	Դասարան	8
Թեմա՝	**Մուրացան, «Հասարակաց որդեգիրը**						
Օգտագործվող նյութեր՝	Մուրացանի դիմանկար, դասագիրք, կավիճ, գրատախտակ, առաջադրանքների թերթիկներ, բնագիր						
Դասի նպատակը	**Առարկայական** 1. Արտահայտիչ, վարժ կարդա տեքստը, պահպանի հայերենին հատուկ արտասանությունը, շեշտադրումը, արտահայտչականությունը: 2. Ձևավորեի վերլուծելու և եզրահանգումներ անելու կարողություն՝ հիմնավորելով այն տեքստով 3.Գնահատի ստեղծագործությունը որպես մարդու հույզերը և զգացումներն արտահայտելու միջոց: 5.Համեմատի անցած ստեղծագործությունների հետ, նշեի նմանությունները և տարբերությունները: **Կարողություն** 1.Գեղագիտական ճաշակի զարգացում: 2.Երևակայության զարգացում: 3.Դրսևորել պատկերավոր մտածողություն և երևակայություն: **Սովորողի դիրքորոշում** Կարևորի մայրենի լեզվի դերը սեփական հույզերը, ապրումները, մտքերը գրագետ և շրջապատին հասկանալի ձևակերպելու գործում						
Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները	**Աշակերտը կկարողանա** 1. Արտահայտիչ, վարժ կարդալ արձակ ստեղծագործությունը՝ պահպանելով հայերենին հատուկ արտասանությունը, շեշտադրումը, արտահայտչականությունը 2. **դուրս գրել պատկեր, զգացողություն նշող բառերը և բառակապակցությունները.** 3. **աշխատել բառարանով** 4. **Նյութի բովանդակությունը ներկայացնել ստեղծագործաբար** 5. **մեկնաբանել, հայտնել սեփական կարծիքը** 6. **ստեղծագործական աշխատանք կատարել տեքստի շուրջ**						
Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն	Ուսումնական գործունեություն	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ(ներ)			

	Աշակերտներ	*Ուսուցիչ*		
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼ **Յրոպ**է(մուտք, ներկա-բացակա) **ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ**	Ծանոթանում են դասի թեմային և նպատակներին			**Կիրառվում է ԽԻԿ համակարգը**
7-րոպե	Հասարակություն բառին առնչվող բառեր են ասում՝ կազմելով պրիզմա։ Աշակերտները խմբեր են կազմում՝	Հանձնարարում է Հասարակություն բառով կազմել պրիզմա։ Առանձին թերթերի վրա գծում է 3 մաս ունեցող աղյուսակ։ Առաջին սյունակում գրում է Գլխավոր պատմություն, երկրորդում՝ կողմնակի պատմություն, իսկ երրորդ սյունակում՝ թաքնված պատմություն։	Հասարակության ի՞նչ շերտեր գիտեք։ Ի՞նչ է նշանակում որդեգիր ։	«Պրիզմա» «Գլխավոր-կողմնակի-թաքնված պատմություն» «Տեքստային աշխատանք»

Ասահին Բարոյան

Իմաստի ընկալման փուլ **35-րոպե** **Գնահատում 3-րոպե** **Տնային աշխատանք** **Անդրադարձ**	ընդգրկելով տարբեր առաջադիմություն ունեցող երեխաների։ Աշխատում են թիմով, գրի են առնում իրենց հատվածից գլխավոր Լսում են դիմացինին առանց ընդհատելու և դրսևորում են հարգալից վերաբերմունք։ Վերլուծում են տվյալ հատվածը, կարծիք են գրում ընդհանուր հատվածի մասին, գտնում և վերլուծում են պատճառահետևանքային կապը։ Գրում են շարադրություն 15 նախադասություններ ի սահմանում «Իմ գործողությունները կախված են/ կախված չեն հասարակության կարծիքից» վերնագրով։	Շրջում է թիմերում, հետևում աշխատանքների ն, լսում կարծիքներ։ Խրախուսում է տարակարծությունները և սեփական կարծիքը պաշտպանելու միտումը։ Զնավորող գնահատում	Ստեղծագործությունը կարդալիս ի՞նչ եք պատկերացնում։ Հատվածում կիրառված պատկերավորման միջոցները ինչպիսի՞ զգացողություն են առաջացնում։ Քեզ համար անհասկանալի ի՞նչ ձևակերպումների հանդիպեցիր։ Ի՞նչ եղավ։ Ի՞նչ էի մտածում։ Ի՞նչ կուզեի, որ լիներ։ Ի՞նչն էր սխալ։	«Մտածի՛ր, զույգվի՛ր, քննարկի՛ր», «Քառաբաժան»

Փոխտնօրեն՝ _____

Ստեղծագործական

Դասապլան -2

Առարկա՝	գրականություն	Ամսաթիվ	13/12/2022	Կիսամյակ	1-ին	Դասարան	8
Թեմա՝	**Շիրվանզադե «Արտիստը»**						
Օգտագործվող նյութեր՝	Շիրվանզադեի դիմանկարը, դասագիրք, կավիճ, գրատախտակ,						
Ամբողջական նպատակներ	Նախորդ դասերից մեկի ժամանակ կիրառել եմ «Գլխավոր-կողմնակի-թաքնված պատմություն»մեթոդը: Այս դասաժամին նույնպես կկիրառեմ, արդյունավետությունը ամրագրելու նպատակով:						
Դասի նպատակը	Առարկայական 1. Արտահայտիչ, վարժ կարդալ տեքստը, պահպանի հայերենին հատուկ արտասանությունը, շեշտադրումը, արտահայտչականությունը: 2. Գլավորի վերլուծելու և եզրահանգումներ անելու կարողություն՝ հիմնավորելով այն տեքստով 3.Գնահատի գործողությունները որպես մարդու հույզերը և զգացումներն արտահայտելու միջոց: 5.Ստեղծագործաբար փոխի ստեղծագործության ընթացքը 6.կարողանա ներկայացնել կատարած աշխատանքը Կարողություն 1.Գեղագիտական ճաշակի զարգացում: 2.Երևակայության զարգացում: 3.Դրսևորել պատկերավոր մտածողություն և երևակայություն: Սովորողի դիրքորոշում Կարևորի մայրենի լեզվի դերը սեփական հույզերը, ապրումները, մտքերը գրագետ և շրջապատին հասկանալի ձևակերպելու գործում						
Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները	**Աշակերտը կկարողանա** 1.Վերլուծել հանձնարարված ստեղծագործությունը և եզրահանգումներ անել **2.Բնութագրել հերոսին, ապրումակցել նրան** **3.Ներկայացնել ստեղծագործության պատկերավորման միջոցները**						
Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Ուսումնական գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ(ներ)			
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼ **4 րոպե**(մուտք, ներկա-բացակա)	Ծանոթանում են դասի ընթացքում իրենց անելիքներին	Ներկայացնում է աշակերտներին դասի նպատակները					

Կշռադատման փուլ **25 րոպե**	«արտիստ» բառին առնչվող բառեր են ասում Աշխատում են համագործակցելով Ստեղծագործաբար վերլուծում են ստեղծագործությունը Փոխում են պատմվածքի գործողությունների ընթացքը Թիմում աջակցում են միմյանց	Ստեղծում է աշխատանքային թիմեր Բաժանում է աշխատանքները, տալիս է համապատասխան առաջադրանքներ Հիշեցնում է թիմով աշխատելու կանոնները Հետևում է աշխատանքի ընթացքին, ուղղորդում է	Ի՞նչ գույներ կօգտագործես Լևոնին պատկերելիս, հիմնավորիր	**«Մտագրոհ»** «Խոսիր-հարցրու-սովորիր»
Գնահատում **5 րոպե**	Փոխադարձ գնահատում	Տալիս է հայտորոշող հարցադրումներ, նպաստում է անաչառ գնահատմանը Հանձնարարում է գրել նամակ տրված բովանդակությամ •նամակ Լևոնին (աշակերտի անունից) •նամակ Լուիզային (աշակերտի անունից)	Ի՞նչ նոր բան այսօր իմացաք: • Ո՞ր տեղեկությու	«Հետադարձ կապի աստիճան»
Տնային աշխատանք **3 րոպե**				«Ելքի տոմս»

Ամփոփագիր

Անդրադարձ **8 րոպե**	Լրացնում են Ելքի տոմսը.	.սիրած կնոջ նամակը Լևոնին •նամակ.սիրո խոստովանություն Հանձնարարում է լրացնել Ելքի քրտերը	նն էր ավելի հետաքրքիր: • Ի՞նչն էր դժվար: • Ի՞նչը խանգարեց աշխատանքի ն և ինչու՞:	

Փոխտնօրեն՝ _____

Ասահիսն Բաղրյան